ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2022թ

Թեման՝ Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը «Կերպարվեստի» մեթոդիկայի ուսուցման գործընթացում

Հաստատություն՝ Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Հասմիկ Թունյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Մանկավարժական մասնագիտական գիտելիքները և հմտությունները «Կերպարվեստի» մեթոդիկայի ուսուցման գործընթացում.....4

Պարապմունքի պլանավորում տարբեր տարիքային խմբերում

- Կրտսեր I.....5
- Կրտսեր II.....11
- Միջին.....13
- Ավագ.....18

Եզրակացություն.....19

Գրքերի ցանկ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գեղագիտական դաստիարակությունը սկսվում է նախադպրոցական տարիքից՝ իր առջև խնդիր դնելով ակտիվացնել երեխաների շփումը արվեստի հետ, որի գեղեցկությունը կարող է հասկանալ նաև նախադպրոցական տարիքի երեխան։

Գեղեցիկ միջավայրը նպաստում է նախադպրոցական երեխայի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը։ Երկուսից երեք տարեկան երեխաների համար գերագույն հաճույք է զբաղվել կերպարվեստային գործունեությամբ, որի ընթացքում նա աստիճանաբար սովորում է գույների, գծերի լեզվով պատմել իր տեսածի և զգացածի մասին։ Կերպարվեստային դաստիարակության ցանկացած պարապմունքի ժամանակ դաստիարակը երեխայի առջև դնում է այնպիսի խնդիրներ, որոնք պահանջում են նրանից ուշադրություն, վերլուծելու, համադրելու, համեմատելու կարողություն։

Իրականացնելով կերպարվեստի ծրագրային պահանջները երեխաները յուրացնում են նկարելու, ծեփելու, դեկորատիվ աշխատանքներ կատարելու տեխնիկաները։

Մանկապարտեզում կերպարվեստը իր ձևերով ուղեկցվում է խաղերով, վերածելով պարապմունքը հեքիաթի։

Կերպարվեստային գործունեության խնդիրներն են.

- Ընդլայնել երեխաների պատկերացումները ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ
- Զարգացնել հետաքրքրասիրությունը գեղանկարի, նատյուրմորտի, պատկերազարդ գրքի, արվեստի նմուշների նկատմամբ։

Գեղագիտական դաստիարակության իրականացման ձևերից մեկը դեկորատիվ նկարչությունն է, որի միջոցով երեխան լուծում է մի շարք խնդիրներ.

- Երեխան յուրացնում է դեկորատիվ նախշի պատկերման տարբեր եղանակների պարզագույն տարրերը։
- Զարգանում է նրա ճաշակը։
- Սովորում է վրձնահպումներով, կետիկներով, շրջանակներով, ուղիղ և ալիքաձև գծերով պատկերել տարբեր նախշեր։

Երեխան իր տպավորությունները արտահայտում է նաև ծեփի միջոցով։ Պետք է զարգացնել երեխայի երևակայությունը, ստեղծագործական կարողությունները և ծեփելու ճիշտ տեխնոլոգիաները։ Ծեփման միջոցով երեխան ստեղծում է տարբեր առարկաներ, փորձելով հաղթահարել որոշ դժվարություններ նպատակին հասնելու և սկսածը ավարտին հասցնելու համար։

Հինգից վեց տարեկան երեխայի կյանքում կարևոր նշանակություն ունի ապլիկացիան: Ապլիկացիայի պարապմունքը նպաստում է շրջակա միջավայրի հետ շփման, ինքնուրույնության, կոկիկության, աշխատասիրության և սկսած

աշխատանքը ավարտին հասցնելու կարողության զարգացմանը:

Կերպարվեստային գործունեությունը ունի մի քանի մեթոդներ, որոնցից են

- Մտավոր գրոհի մեթոդ
- Խմբավորման մեթոդ
- Բանավոր շրջանագծի մեթոդ և այլ մեթոդներ:

« Մտավոր գրոհի մեթոդ»

Նախքան պարապմունքը սկսելը երեխաներին առաջարկվում է քննարկել այն, ինչ գիտեն տվյալ թեմայի վերաբերյալ, ապա դաստիարակը հերթականությամբ հարցնում է բոլոր երեխաներին, և նրանք պետք է ասեն այն ամենը, ինչ մտածում են: Այս մեթոդի շնորհիվ երեխաները ներկայացնում են իրենց գիտելիքները, հայտնում են կարծիքներ՝ լինի դա ճիշտ, թե սխալ:

«Խմբավորման մեթոդ»

Խմբավորման մեթոդ նպատակահարմար է կիրառել երեխաների որոշ խմբի մեկ ընդհանուր գործի շուրջ համախմբելու համար: Այդ կերպ երեխաները ցուցաբերում են փոխօգնություն, մեկը մյուսին աջակցելու ցանկությունը, հարգանք ընկերոջ գործի նկատմամբ, ձևավորվում է ուրիշի կարծիքը հաշվի առնելու գիտակցում: Երեխաներին կարելի է խմբավորել հենց տվյալ պարապունքի համար անհրաժեշտ դիդակտիկ պարագաներով և այդ կերպ խմբավորում սեղանների շուրջ:

«Բանավոր շրջանագծի մեթոդ»

Բանավոր շրջանագծի մեթոդը համագործակցային վարժություն է: Երեխաները իրենց հանձնարարված թեմայի վերաբերյալ հերթականությամբ մտքեր են արտահայտում և աշխատում են անել այնպես, որ մեկը մյուսին տրամաբանորեն շարունակի, որտեղ նրանց մեծապես օգնում է դաստիարակը: Օրինակ, մարտի 8-ի մասին ասում են, որ դա մայրիկների, տատիկների տոնն է,դա գարնան տոն է, այդ օրը պետք է բացիկներ տալ մայրիկներին և տատիկներին և այդպես շարունակ:

Պարապմունքների պլանավորում տարբեր տարիքային խմբերում

Կրտսեր I

Ծեփ

Խաղ-պարապմունք / ենթախմբում/

Թեման՝ <<Ինչ փափուկ է խմորը>>

Նպատակը՝

- Սովորեցնել՝
- Ճիշտ նստել, լսել դաստիարակի հրահանգները,
- Աշխատել ծեփատախտակի վրա։
- Ծանոթացնել
- Ծեփման պարզ տեխնիկային՝ ճմռել ծեփանյութը,
- ծեփանյութին՝ պլաստիլինի /աղի խորին, կացին/, դրա հատկությունների,
- աշխատելու կանոններին։
- Արթնացնել հետաքրքրություն ծեփակերտման գործընթացի նկատմամբ

Անհրաժեշտ պարագաներ

- Ծեփատախտակներ՝ ըստ երեխաների քանակի
- Պլաստիլին /աղի խմորը, կավ/
- Խոնավ լազերային/պլաստիլինի դեպքում ձեթոտ լաթեր/

Պարապմունքի անցկացման մեթոդիկան

Դաստիարակը ենթախմբին ցույց է տալիս ծեփանյութը պատմում դրա հատկությունների մասին։ Այդ ընթացքում նա ցուցադրում է, թե ինչպես պետք է վարվել ծեփանյութի հետ։ Նշում է, որ այն փափուկ է, կարող է լինել տաք կամ սառը / աղի խմորի դեպքում տաք է լինում, եթե այն հունցվում է տաք ջրով, պլաստիլինը տաքանում է մարդու ափերի ջերմությունը և այլն։ Պատմում է, որ խմորից պատրաստում են հաց, կարկանդակներ, բուլկիներ և այլն։

Ծեփանյութը ներկայացնելուց հետո դաստիարակը ենթախմբի անդամներին տալիս միջին չափի մեկական կտոր ծեփանյութ՝ առաջարկելով խաղալ դրա հետ ինչպես ճմռել ծեփանյութի կտորը և նրան տալ բլիթի տեսք։ Աշխատանքի ընթացքում դաստիարակը կարող է արտասանել որևէ քառյակ.

Խմո'ր, խմո'ր, այ խմոր,

Էս ինչ փափուկ, անուշ ես։

Թաթիկներիս չկպչես,

Բլիթ թխեմ, ուտեմ քեզ։

Պարապմունքի ավարտին դաստիարակը նշում է, թե ինչ նոր բան սովորեցին երեխաները և որքան Լավ աշխատեցին։

Պարապմունքից հետո դաստիարակը երեխաների աշխատանքների վրա ամրացնում է անվանաթղթերեը և դրանք տեղավորում պտտվող տակդիրի վրա։ Դրանք դրվում են երեխաների և ծնողների համար տեսանելի տեղում։

Կապը այլ պարապմունքների և գործունեության այլ ձևերի հետ

Առաջին պարապմունքների նպատակն է երեխաներին ներկայացնել ծեփանյութը և հետաքրքրություն առաջացնել ծեփակերտման նկատմամբ։ Այսինքն երեխաները դեռևս ծանոթանում են ծեփանյութին և խաղում դրա հետ։ Այս ամենը պետք է կազմակերպվի այնպես, որպեսզի հաճույք պարգևի երեխաներին և առաջացնի ծեփակերտման աշխատանքի ցանկություն։ Եթե դաստիարակը որոշել է որպես ծեփանյութ օգտագործել աղի խմոր, ապա այս փուլում խմորը դեռ պետք չէ ներկել։ Աղի խմորի պատրաստված աշխատանքները կարելի է լավ չորացել և օգտագործել խաղերի ժամանակ։

Կառուցողական աշխատանք

Պարապմունք / ենթախմբով/

Թեման՝ <<Կառուցենք կարմիր աշտարակ>> / ըստ դաստիարակի օրինակի>>

Նպատակը՝ Սովորեցնել կառուցել չորս խորանարդից կազմված աշտարակ։

Վարժեցնել խորանարդները կոկիկ, նրբորեն ուղղելով, դնել իրար վրա։

Ամրապնդել <<կառուցել աշտարակ, կարմիր խորանարդ, բարձր աշտարակ>> բառակապակցությունների օգտագործումը։

Զնավորել, հրահանգների համաձայն, կառուցումներ կատարելու հմտություն։

Անհրաժեշտ պարագաներ.

- Չորսական կարմիր խորանարդներ՝ ըստ երեխաների քանակի
- Եղևնիներ՝ խորանարդիկներին համապատասխան չափի, կամ այլ մանր խաղալիքներ
- Շինանյութը և խաղալիքները հավաքելու համար հարմար տուփերի

Պարապմունքի ընթացքը

/ Խմբասենյակի դուռը ծեծում են, դաստիարակը այն բացում է ներս է բերում փոքրիկ եղևնի/։

Դաստիարակ._ Տեսե՛ք, երեխաներ, ինչ լավ հյուր ունենք։ Իսկ ես մտածում էի՝ ում համար ենք այսօր աշտարակ կառուցել, _դիմում է հյուրին._ եղևնի՛, ես քեզ հիմա կտեղավորեմ սեղանի վրա, և դու երեխաների հետ միասին կդիտես, թե ինչպես եմ կարմիր խորանարդներից կառուցում բարձր աշտարակ։ Ենթախմբի ներկայությամբ, չորս կարմիր գույնի խորանարդիկներից կառուցում է բարձր աշտարակ։ Ենթախմբի ներկայությամբ, չորս կարմիր գույնի խորանարդիկներից կառուցում է՝ մանրամասնորեն մեկնաբանելով յուրաքանչյուր գործողություն.

-Ես վերցնում եմ կարմիրգույնի խորանարդը, այն դնում եմ սեղանին՝ իմ առջև, այնուհետև վերցնում եմ նույն գույնի ևս մեկխորանարդ և դնում առաջինի վրա։ Դրանք ուղղում եմ, որպեսզի հավասար լինեն։ Այնուհետև ավելացնում եմ երրորդ կարմիր խորանարդը, նորից զգուշությամբ ուղղում եմ։ Որպեսզի մեր աշտարակը ստացվի ավելի բարձր, քան անցած անգամ, ես կավելացնեմ ևս մեկ խորանարդ։ Տեսե՛ք ինչ բարձր աշտարակ ստացվեց։ Դաստիարակը երեխաներին տրամադրում է կարմիր գույնի խորանարդներ և առաջարկում պատրաստել նույնանման աշտարակ։ Կառուցումները կարող են իրականացնել քայլ առ քայլ հնարի միջոցով։

- Վերցրեք մեկական կարմիր գույնի խորանարդ և դրեք այն ձեր դիմաց, սեղանին։ Հետո վերցրեք ևս մեկ խորանարդ և այն դրեք առաջինի վրա, ուղղեք, որպեսզի հավասար լինեն։ Իսկ հիմա վերցրեք երրորդ խորանարդը և այն դրեք երկրորդի վրա։ Զգուշությամբ նորից ուղղեք։ Իսկ հիմա, որպեսզի ստացվի ավելի բարձր աշտարակ,

եկեք ավելացնենք չորրորդ խորանարդը: Տեսե՛ք ինչ բարձր աշտարակ ստացվեց: /Դաստիարակը հարցնում է, թե կառուցեցին ինչ նրանք, ինչպիսի աշտարակ ստացվեց, որպեսզի ամրապնդի նոր բառակապակցությունները:

-Ապրե՛ք, դուք լավ աշխատեցիք, կարծում եմ՝ եղևնին էլ սովորեց աշտարակ կառուցել: Իսկ որպեսզի եղևնին ավելի ուրախ լինի, եկեք մեր աշտարակներից մեկը որպես պատվանդան նվիրենք նրան: /Դաստիարակը եղևնին դնում է որևէ աշտարակի վրա և կազմակերպում է 1-2 րոպեանոց խաղ: Պարապմունքի վերջում առջարկում է հավաքել և խորանարդները դասավորել տուփի մեջ: Այս պարապմունքից սկսած առանձնացվում է որևէ շինություն և դրվում երեխաների համար տեսանելի տեղում: Օրինակ՝ պատվանդանով եղևնին կարելի է դնել երեխաներին հասանելի տեղում, որպեսզի նրանք կարողանան այն դիտել, շոշափել և քննարկել դրա պատրաստման քայլերը: Շինությունը կարելի է օգտագործել նաև այլ պարապմունքների ընթացքում իբրև դիդակտիկ նյութ:

Կրտսեր II

Նկարչություն

Տեսակը՝ թեմատիկ նկարչություն

Թեմա՝ « Զարդարենք եղևնին»

Նպատակը՝ երեխաներին սովորեցնել պատկերել եղևնի։ Կլոր, շրջանաձև առարկաների, ինչպես նաև ուղիղ գծերի միջոցով զարդարել այն՝ տալով տոնական տեսք։ Կարողանալով պատկերը տեղադրել թղթի ամբողջ մակերեսով, օգտվել 3-5 վառ գույներից։ Ծանոթանալ վարդագույնին և երկնագույնին։ Ամրապնդել գուաշով նկարելու տեխնիկան։ Զարգացնել գունազգացողությունը, գեղագիտական ընկալումը։ Ստեղծել ուրախ տրամադրություն, խրախուսել նկարելու ցանկությունը։

Անհրաժեշտ պարագաներ՝ 3-5 գույնի գուաշ, ջրաներ՝ յուրաքանչյուր սեղանին, ալբոմի A4 թղթեր, վրձիններ, լաթեր՝ երեխաների քանակով։ Մոտ 1մ. բարձրությամբ եղևնի, բացիկներ՝ եղևնիների պատկերով։

Պարապմունքի անցկացման մեթոդիկան

Դաստիարակը պարապմունքը սկսում է ոտանավորի ընթերցմամբ.

Հագած կապած, փշոտ գլխարկ,
Կանաչ, շորեր շողշողուն,
Ես մի ծառ եմ մեջքով բարակ,
Վրաս զարդեր պսպղուն։

Իմ ուսերին ինչ սիրունիկ
Խաղալիքներ կան պես-պես՝
Փայլուն աստղեր, ձի ու ձկնիկ,
Մեծ տիկնիկներ վարդերես։

Ոսկե ընկույզ, արծաթ նավեր
Եվ կողովներ գույնզգույն,
Իսկ ճյուղերիս տակ ծանրաբեռ
Զմեռ Պապին է ժպտում։

Դաստիարակը հնարավորություն է տալիս երեխաներին հիանալու տոնածառի գեղեցկությամբ, նրանց ուշադրությունը դարձնում է եղևնու խառուցվածքի, գույնի, ժյուղերի դասավորվածության, գունեղ խաղալիքների վրա։

Երեխաներին բաժանվում են որևէ բաց գույնով երանգավորված թղթեր։

-Երեխաներ, այսօր մենք կնկրանենք գեղեցիկ, զարդարված տոնածառ։ Նախ եղևնին պատկերելու համարմենք կընտրենք համապատասխան գույն՝ մուգ կանաչ։ Եղևնու ճյուղերը կպատկերենք բաց կանաչ գույնով։ Դրանք պետք է նկարել ուղիղ, վերևից ներքև. մեկ ճյուղ՝ աջից, մեկ ճյուղ՝ ձախից։ Ահա ստացանք գեղեցիկ փարթամ եղևնի։ Իսկ այժմ այն զարդարենք գունեղ խաղակիքներով։

Դաստիարակը մեկ անգամ ևս երեխաների ուշադրությունըհրավիրում է զարդարված տոնածառի խաղալիքների, դրանց ձևերի ու գույնրի վրա։ Երեխաները կարող են մոտենալ տոնածառին, զգուշությամբ ձեռք տալ խաղալիքներին, շոշափել դրանք, նշել գույնը։

Մեկ անգամ ևս հիշեցնում է կլոր, շրջանաձև և ուղիղ առարկաներ պատկերելու տեխնիկան և վրձինով, ներկով աշխատելու պահանջները.

-Երեխաներ, նախ անհրաժեշտ է նկարել եղևնին՝ կանաչ գույնով։ Մինչ այն կչորանա, մենք կլվանանք վրձինը, կչորացնենք լաթով և հերթով կպատկերենք տարբեր գույների խաղալիքները։

Ընթացում հետև է երեխաների դիրքին և նկարելու տեխնիկային։ Պարապմունքի վերջում դաստիարակը խրախուսում է երեխաներին և առաջարկում է պատմել իրենց նկարների մասին։

Մինչ նկարելը կատարում ենք թարմացնող վարժություն.

«Կարուսել»

Կարուսելը սկզբում դանդաղ պտտվում է, հետո արագ։

Բանաստեղծության վերջին բառի հետ կանգ է առնում։

Մենք իրարից անբաժան՝ Պտտվում է կարուսելը.

Կազմել ենք ուրախ շրջան. Կամաց-կամաց մեր քայլերը

Մեզ ոչ ոք չի խանգարում, ՈՒԺ են առնում ու վազում։

Երբ խաղում ենք ու երգում։ Կամա՛ց, կամա՛՛ց, էլ մի՛ շտապեք,

Դանդաղ շարժվում են ոտքերը, Կարուսելը կանգնեցրեք։

Կատարում են 2-3 անգամ։

Կապը այլ պարապմունքների և գործունեության այլ ձևերի հետ

Նախապես դիտել դահլիճում զարդարված եղևնին, կազմակերպել փոքրիկ զրույց։ Պատմել, թե ինչպիսին էտոնածառն իրենց տանը։ Դիտել նկարներ, իլյուստրացիաներ, տոնածառի տարբեր խաղալիքներ։ Երեխաների համար ըմթերցել թեմային համապատասխան ոտանավորներ, պատմություն, առաջարկել հրանելուկներ, կազմակերպել դիդակտին խաղեր։

ՄԻՋԻՆ ԽՈՒՄԲ

ՆԿԱՐՉՈՒԹՅԻՆ

ԹԵՄԱՆ՝ «Տոնածառի խաղալիքներ»

ՆՊԱՏԱԿԸ՝ Երեխաներին սովորեցնել նկարել զարդարված ծառ եղեվնի՝ տոնածառ:Ամրակայել եղևնու դեպի ներքև համաչափ տարածվող ճյուղեր նկարելու կարողությունը: Սովորեցնել գնահատել ինչպես սեփական , այնպես էլ ընկերների կատարած աշխատանքը:

ԸՆԹԱՑՔԸ՝ Պարապմունքը սկսել Հռ. Պողոսյանի «Տոնոծառի երգը» ոտոնավորի արտասանությամբ:

Դիտել զարդարված եղևնու ՝ տոնածառի նկարներ և քննարկել, թե ինչպես է զարդարված.

- Ինչ գույն ունի եղևնին:
- -Ինչերով է զարդարված:
- Ինչու են ասում տոնածառ՝ տոնական ծառ:
- Առաջարկել նկարել զարդարված , տոնական եղևնի:
  Ավարտուն աշխատանքները փակցնել գրատախտակին : Գնահատել բոլոր աշխատանքները և հիանալ արդյունքներով:
  ԿԱՊԸ ԱՅԼ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ
  Նոր տարվա ըոնականերգերի, բանաստեղծությունների ուսուցման, մանկական ստեղծագործությունների ընթեցում:

ԾԵՓԱԿԵՐՏՈՒՄ
« Տոնածառի խաղալիքներ»

ՆՊԱՏԱԿԸ՝ Երեխաներին սովորեցնել ծեթոնից պատրաստել տոնածառի խաղալիքներ: Զարգացնել ծեփոնին ցանկալի ձև տալու , բնորոշ հատկանիշներ հաղորդելու , ստեղծագործոլու կարողություն, աչքաչափը, մատների մանր մկանները: Երեխաներին ներշնչել գեղեցիկ և բազմազան խաղալիքներ պատրաստելու ձգտում:

Անհրաժեշտ պարագաներ՝ ծեփամածիկ , աստղիկներ, ուլունքներ,, կոճակներ , տախտակներ և մոմլաթեր:

ԸՆԹԱՑՔԸ՝ Պարապմունքը սկսել Լ. Սարգսյանի « ՆՈՐ ՏԱՐՎԱ ԵՐԳ- ՊԱՐ» բանաստեղծության ընթերցմամբ:

Երեխաների տեսադաշտում դնել տոնածառի խաղալիքներ և նկարագրել այն:

Երեխաներին ցույց տալ խաղալիքներ ծեփելու եղանակը, որից հետո առաջարկել ծեփել ինքնուրույն: սովորեցնել խաղալիքները զարդարել կոճակներով, ուլունքներով: պարապունքը ավարտել տոնական ուրախ երգով:

Ապլիկացիա

Թեմա՝ « Զարդարենք եղևնին»

Նպատակը ՝ Սովորեցնել երեխաներին նախարոքք կտրատված դետալները իրար միացնելով ստանալ ավարտուն պատկեր:Զարգացնել երեխաների աչքաչափը, մանր մոտորիկան, տարածության մեջ կողմնորոշվելու ունակությունը: Ամրակայել սոսնձով աշխատելու կարողությունը: Երեխաներին ներշնչել գեղեցիկը տեսնելու և գնահատելու կարողությունը:

Անհրաժեշտ պարագաներ՝ Ա⁴ կապույտ թուղթ, նախօրոք կտրատված եղևնիներ և խաղալիքներ, սոսինձ:

Ընթացքը՝ դիտել գեղեցիկ զարդարված տոնածառի նկարներ , նկարագրել նրան, բացատրել աշխատելու կարողությունը: Երեխաներից մեկին առաջարկել ցույց տալ թղթե եղևնին , մյուսներին առաջարկել ցույց տալ խաղալիքները: Ընթացքում օգնել դժվարացող երեխաներին: Վերջում հիանալ կատարված աշխատանքներով:

Ավագ խումբ

ԾԵՓ

Թեման՝ «Բանջարեղեն»

Նպատակը՝ Շարունակել զարգացնել երեխաների մանր մոտորիկան, երևակայությունը, ծեփելու մեթոդները՝ գլանման, գնդման, հարթեցման։

Ամրապնդել գիտելիքները աշնան մասին։ Դաստիարակել ինքնուրույնություն, նախաձեռնողականություն;

Անհրաժեշտ պարագաներ. ծեփամածիկ, տախտակ, բանջարեղենի մուլյաժներ, մոմլաթեր, դանակներ։

Ընթացքը. Պարապմունքը սկսել համապատասխան հանելուկներ առաջարկելով։

Ճիշտ պատասողաններին զուգակցել տվյալ բանջարեղենի մուլյաժի ցուցադրումը։ Նկարագրել նրա արտքաին տեսքը, ձևը, գույնը։ Պարապմունքի վերջում խաղալ «Աշնան շուկա » խաղը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՈՒսումնասիրելով և աշխատելով ստորև նշված գրքերով կարող եմ եզրակացնել, որ նրանք օգնում են դաստիարակին ճիշտ ձևով աշխատել նախադպրոցական տարիքի երեխաների հետ։ Երեխաները սովորում են լինել ինքնուրույն, ընկերասեր, զարգանում է գունազհացողությունը, գեղեցիկը տեսնելու և ընկալելու կարողությունը։ Զարգանում է երևակայությունը, ստեղծագործական կարողությունը, խոսքը։ Սովորում է մաքուր և կոկիկ կատարել առաջադրանքը։ Գնահատել աշխատանքը, ինքնուրույն ստեղծագործել, համեմատել սեփական ածխատանքը ընկերոջ ածխատանքի հետ։

Ժամանակակից մանկավարժությունը իր անհատակողմնորոշիչ դիրքորոշումներով ողողված է յուրաքանչյուր երեխայի ստեղծագործական ներ ուժի բացահայտմանն ու զարգացմանը։ Ստեղծագործելու մտահղացումը առաջանում է աստիճանաբար, կուտակվող ու հարստացվող հուզազգացմունքային ոլորտի և ձևավորվող հուզական տպավորությունների հիման վրա, որոնք երեխայի մեջ ձևավորում են որոշակի կերպարվեստային պատկերացումներ։ Դրանք երեխան ամրապնդում է գեղագիտական փորձով։ Կրտսեր նախադպրոցական տարիքում ստեղծելու մտահղացումը իրադրային է պայմանավորված անսպասելի, այն արտահայտում է հիմնականում նկարելու ցանկությամբ։ ավագ նախադպրոցական տարիքում մտահղացումը ավելի կայուն է, այն կարող է արտացոլվել գեղագիտական գործունեության տարբեր ձևերում։

Երեխան ընդունակ է ստեղծագործելու կերպարվեստի միջոցով, գեղարվեստական խոսքի, երգարվեսի, պարարվեստի օգնությամբ, իսկ հաճախ մի քանի ձևերում միաժամանակ։ Գեղագիտական դաստիարակությանը նպաստող ամենալավ միջավայրը հայրենի բնությունն է իր ազգամշակութային բազմադարյա շերտով, քարակերտ և ձեռակերտ կոթողներով, ազգային պատմությամբ, լեզվով և կենցաղով։

ԳՐՔԵՐԻ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական մանկավարժություն» Հղ.Ա. Ա. Մարության և Ա. Մ. Դալլաքյան
2. «Կերպարվեստի պարապմունքները ներկայացվող ժամանակակից պահանջները մանկապարտեզում», Հղ. Ժ. Լ. Խաչատրյան
3. «5-6 տարեկան երեխաների կրթության ծառայությունների կազմակերպումը այլընտրանքային մեթոդով» : Դաստիարակի ուղեցույց
4. «Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում» Հղ. Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան
5. «Կերպարվեստի պարապմունքներ» Հղ. Լ. Սմբատյան, Լ.Վերդյան, Լ. Սարգսյան